ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ա. ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ որոշեց.

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Հ-29 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում 2024թ. օգոստոսի 14-ին Կապալառու կազմակերպությունը պետք է ավարտեր նախատեսված աշխատանքները (Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո հիսունհինգ օր), սակայն առ այսօր պատվիրատուին չի տրամադրել պայմանագրի 4.1 հավելվածով նշված՝ պայմանագրի արդյունքը՝ Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը, իսկ աշխատանքները կատարվել են մի շարք թերություններով և ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների խախտումով՝ առանց նախապես Պատվիրատուի հետ համաձայնեցնելու: Աշխատանքների կատարման ընթացքում ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի աշխատակիցները հետևել են կատարվող աշխատանքներին, բազմիցս այցելելով շին-աշխատանքների կատարման վայր, որի ընթացքում Կապալառու կազմակերպության ներկայացուցչին տեղեկացվել է, որ աշխատանքները կատարվում են թերություններով: Մասնավորապես՝ 2024թ. սեպտեմբերի 24-ին հենակետ այցելության ժամանակ պարզվել է, որ լինոլիումե հատակները և շրիշակները իրականացվել են փոքր մակարեսով, բաղկացած կարճ գծամետրով կտորներից, որից հետո թերությունը վերացվել է, բացառությամբ մի հատվածի, որտեղ տեղադրված է այլ գույնի շրիշակ:

Բացի այդ, 2024թ. դեկտեմբերի 17-ին վերջին այցելության ժամանակ հայտնաբերել են այլ թերություններ, որոնք մինչ օրս վերացված չեն:

1. Պետք է իրականացվեր միջնորմների կառուցում մետաղական ցինկապատ պրոֆիլներից, 2 կողմից երեսապատված δ=12,5մմ հաստության գիպսոկարտոնե սալերով, ձայնամեկուսացմամբ - գիպսոկարտոնե սալերի փոխարեն, առանց Պատվիրատուի հետ համաձայնեցնելու օգտագործվել են ՕՍԲ տախտակներ (որը հրդեհավտանգ է), հետևաբար չեն կատարվել նաև պատերի և շեպերի ծեփամածկումը գիպսային և կավճային մածիկով և ներկումը լավորակ լատեքսային ներկով, այլումինե պրոֆիլներ սվաղի անկյունային եզրերի համար, պատերի երեսապատումը մետաղական ցինկապատ պրոֆիլներից կարկասով, երեսապատված 12,5մմ գիպսոկարտոնե սալերով, առաստաղի

լավորակ ծեփամածկում մածիկով , հղկում և ներկում լատեքսային ներկով, առաստաղի երեսապատում մետաղական ցինկապատ պրոֆիլներից կարկասով, երեսապատված 12,5մմ գիպսոկարտոնե սալերով,

2. Պլաստիկե շրիշակների տեղադրում – որոշ հատվածում տեղադրված է այլ գույնի շրիշակ,

3. Ալյումինե խուլ դռների տեղադրում – հենակետի մուտքի ալյումինե խուլ դռան փոխարեն տեղադրված է ապակե տարբերակով դուռ:

4. Հենակետի արտաքին թիթեղյա հատվածի ներկում – ներկման աշխատանքները կատարված են անփույթ և անհավասար, կապույտի բաց և մուգ երանգներով:

5. Անջատիչներ և ավտոմատ անջատիչ – մի քանի անջատիչներ և ավտոմատ անջատիչը տեղադրվել են հակառակ ուղղությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից առ 31.01.2025թ. հաշվարկվել է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար 0.05% չափով տույժ՝ 128 700 և 0.5% չափով տուգանք՝ 11 000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծել է ՀՀ ՆԳՆ և «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Հ-29 ծածկագրով Պայմանագիրը՝ թիվ 1 չափաբաժնի մասով: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշման հիմք է հանդիսանում ծանուցում ստանալուց հետո՝ 5 օրացուցային օրվա ընթացքում սահմանված տույժ ու տուգանքը և որակավորման ու պայմանագրի ապահովումները «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխան հաշվեհամարներին չվճարելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՖԻԴԱՆՅԱՆ**

« 18 » « 02 » 2025թ.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի	08242265	ՀՀ Ք. Երևան , Տիգրան Մեծի 17		**Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ա. ենթակետի**		**ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇՐՆ/2024/Հ-29 Պատվիրատուի ղեկավարի «18» «02» 2025թ. որոշման համաձայն**